**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՊՀՖ-ՆԲՄԾՁԲ-21/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

15.01.2021թ.

Ք. Երևան

Մասնակցում էին՝

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝**

Գրիգոր Չոբանյան- Գլխավոր իրավախորհրդատու,

**Հանձնաժողովի անդամներ՝ գնահատող աշխատակազմ**

Լուսինե Ավանեսյան –Ավագ վերլուծաբան, (ԳԱ)
Հայարփի Վարդանյան – Տնօրենի գրասենյակի ղեկավար,(ԳԱ)
Տիգրան Ղազարյան – Ընդհանուր ծառայությունների բաժնի պետ, (ԲԱ)
Սաթինե Հովակիմյան - գործավար, (ԲԱ)
**Քարտուղար՝** Դ. Մադոյան

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

**1. Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 37փ., հասցեյով Հայաստանի պետական հետազոտությունների ֆոնդ ՓԲԸ գրասենյակում՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 15-րդ օրը, ժամը 11:00-ին: Հայտերի գնահատումն իրականացվել է հայտերի բացումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը հանձնաժողովը չի դիտարկել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/**

Հայաստանի պետական հետազոտությունների ֆոնդ ՓԲԸ կողմից թղթային եղանակով կազմակերպված ՀՊՀՖ-ՆԲՄԾՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| | |
|---|---|
| 1 | GSA & Co SAS(Global Sovereign Advisory) |
| 2 | OÜ Civitta International |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 GSA & Co SAS(Global Sovereign Advisory)-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 OÜ Civitta International-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ հավելվածները թերի են ներկայացված:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**4. Հանձնաժողովի կայացրած որոշումները**

Հանձնաժողովը որոշեց.

1. GSA & Co SAS(Global Sovereign Advisory)-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

2. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել OÜ Civitta International-ին ՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը**

ՀՊՀՖ-ՆԲՄԾՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հունվարի 25-ին ժամը 12:00-ին Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ գրասենյակում. Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության փ. 37:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ________ Գ. Չոբանյան

հանձնաժողովի անդամներ՝ ________ Լ. Ավանեսյան

________ Հ. Վարդանյան

________ Տ. Ղազարյան

________ Ս. Հովակիմյան

հանձնաժողովի քարտուղար՝ ________ Դ. Մադոյան